

ՆԱԽԱԲԱՆ

2008 թ. հոկտեմբերի 1-ից ՀՀ կառավարության կազմում գործում է ՀՀ սփյուռքի նախարարությունը, որի նպատակն է՝ եղած հնարավորությունների օգտագործմամբ **Հայաստան-Սփյուռք** գործակցության զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծել, համակարգել ոլորտում իրականացվող աշխատանքները, գնահատել արդյունքները, մշակել և իրականացնել այնպիսի քաղաքականություն, որը կնպաստի հայկական աշխարհի ստեղծմանը. Հայաստանի և հայկական Սփյուռքի միջև կապերի ամրապնդմանը, հայ ժողովրդի հոգևոր միասնությանը, հայ կրթական, գիտական, մշակութային, տնտեսական, երիտասարդական, մարզական կյանքի զարգացմանը: Անցած 4 տարիների ընթացքում նախարարությունը կարողացել է գործընկերային կապեր ու համագործակցություն հաստատել համահայկական կառույցների, աշխարհի 100-ից ավելի երկրներում գործող համայնքային կազմակերպությունների, ինչպես նաև ԱՊՀ տարածքում ձևավորված հարյուրավոր համայնքների ղեկավարների հետ:

Սույն «Առաջարկություններ համայնքային կառույցների գործունեությունը կազմակերպելու համար» մեթոդական ձեռնարկի միջոցով փորձ է արվում օժանդակել Սփյուռքի համայնքային կազմակերպություններին և դրանց ղեկավար մարմիններին՝ ավելի արդյունավետ դարձնելու համայնքի գործունեությունը, նպաստելու հայապահպանությանը, հայ համայնքի համախմբմանը, Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանը: Հաշվի առնելով Սփյուռքի տարաբնույթ կառույցների փորձն ու աշխատանքների կազմակերպման մեթոդները՝ ձեռնարկը նախատեսվել է օժանդակելու բնակության պետության քաղաքական, տնտեսական, մշակութային, սոցիալական և հանրային կյանքին համայնքի անդամների ինտեգրմանը: Այս մեթոդական ձեռնարկը ուղիներ է առաջարկում, որոնք կնպաստեն համայնքների ներուժը նպատակաուղղելու հայրենիքի հզորացման գործին, ինչպես նաև, առավել սերտացնելու ՀՀ սփյուռքի նախարարության հետ տարվող աշխատանքները:

Ձեռնարկը կազմելիս ուսումնասիրվել են տարբեր երկրների հայ համայնքների ինքնակազմակերպման ու զարգացման դրական օրինակները: Քանի որ օտարերկրյա պետություններում հայկական համայնքները ծավալում են իրենց գործունեությունը տարբեր իրավաքաղաքական և մշակութային պայմաններում, ապա այս երաշխավորությունները կարող են դիտարկվել որպես բարի ցանկությունների հավաքածու, որոնց այս կամ այն մասի կիրառման նպատակահարմարության և հնարավորության հարցը, բնականաբար, պետք է որոշեն հայկական կառույցները և դրանց ղեկավար մարմինները:

Ձեռնարկում ներկայացվում են համայնքային աշխատանքի կազմակերպման, մեր տեսանկյունից, հնարավոր ոլորտները և ուղղությունները, առաջարկություններ դրանց կատարելագործման ուղղությամբ: Դրանց իրականացումը, կարծում ենք, կնպաստի հայապահպանությանը, Հայրենիք-Սփյուռք գործակցության զարգացմանը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. ԿՐԹԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏ

«Տանը խոսենք միայն հայերեն»

«Պահպանենք, զարգացնենք և տարածենք հայ մշակույթը, այն ազգի անձնագիրն է»:

1. Աշխատանքների առանցք դարձնել կիրակնօրյա և ամենօրյա դպրոցներում երեխաների թվի ավելացումը, նպաստել հայաշատ տարածքներում նոր դպրոցների բացմանը:
2. Հայոց լեզվի իմացության մակարդակի բարձրացման նպատակով երիտասարդների շրջանում կազմակերպել տարբեր միջոցառումներ, խրախուսել տանը հայերեն խոսելը՝ ղեկավարվելով «Տանը խոսենք հայերեն» կարգախոսով, դիտել Հ1 և այլ հայալեզու արբանյակային հեռուստաալիքների հաղորդումներ, բոլոր համայնքային միջոցառումներն անցկացնել հայերենով, համայնքի ավելի մեծ թվով անդամների օգնել՝ դառնալու Հայկական վիրտուալ քոլեջի ուկնդիր՝ www.avc-agbu.org/home.php, սովորելու հայոց լեզու, հայ ժողովրդի պատմություն և ճարտապետություն առարկաները:
3. Ստեղծել կրթության հարցերով զբաղվող հանձնախումբ, հաշվառել համայնքում 4-17 տարեկան երեխաներին և ժողովների, հանդիպումների, նամակների միջոցով հորդորել ընտանիքներին, որ երեխաները հայկական ամենօրյա, մեկօրյա դպրոցներ կամ այլ դասընթացների հաճախեն:
4. Աջակցել համայնքում գործող հայկական դպրոցի կարիքների բավարարմանը՝ կապ հաստատելով ՀՀ սփյուռքի նախարարության համահայկական ծրագրերի վարչության գիտակրթական ծրագրերի բաժնի հետ:
5. ՀՀ Սփյուռքի և կրթության ու գիտության նախարարությունների միջոցով լուծել դասագրքերի ձեռքբերման և առաքման հարցը:

6. Աջակցել համայնքում գործող դպրոցների ուսուցիչների՝ Հայաստանում վերապատրաստվելուն: Ամեն տարի ամռանը Երևանի պետական համալսարանի բազայի հիման վրա ուսուցիչների վերապատրաստման անվճար կազմակերպվող դասընթացներին մասնակցելու համար, նախօրոք Սփյուռքի նախարարություն ներկայացնել համապատասխան փաստաթղթեր:
7. Հայ երեխաների համար մայրենի լեզվի, հայ ժողովրդի պատմության, երգի-պարի դասեր կազմակերպելու նպատակով դպրոցներում տարածքներ տրամադրելու համար բանակցել տեղական իշխանությունների հետ: Աշխատանք տանել հայերով խիտ բնակեցված տարածքներում գործող հանրակրթական դպրոցների ծրագրերում հայոց լեզվի և հայոց պատմության դասընթացների ընդգրկման համար:
8. Աջակցել համայնքներում հայկական գրադարաններ ստեղծելուն և գործող գրադարանները գիտահանրամատչելի, գեղարվեստական, ուսումնամեթոդական գրականությամբ և ուսումնասօժանդակ նյութերով համալրելուն՝ ՀՀ կրթության ու գիտության և սփյուռքի նախարարությունների կողմից իրականացվող Սփյուռքի կրթամշակութային կազմակերպություններին գրականության անվճար տրամադրման և առաքման ծրագրերի շրջանակներում:
9. Աջակցել հայկական կազմակերպություններին, համայնքային, հոգևոր և կրթամշակութային կառույցներին ՀՀ պետական խորհրդանիշերի փաթեթների ձեռքբերմանը՝ Սփյուռքի նախարարության համապատասխան ծրագրի շրջանակներում:
10. Լուրջ ուշադրություն դարձնել հայ ոգու, ազգային մշակույթի և ավանդույթների պահպանմանը, տարածմանը և սերունդներին փոխանցելուն, այդ նպատակով կազմակերպել համապատասխան միջոցառումներ:
11. Խրախուսել համայնքի երիտասարդներին՝ բարձրագույն կրթություն ստանալ Հայաստանում: Այդ նպատակով տարածել համապատասխան տեղեկատվություն և գովազդել եղած փորձը:
12. Օժանդակել և ապահովել ամռան ամիսներին ՀՀ կառավարության կողմից կազմակերպվող համահայկական մշակութային,

երիտասարդական, մարզական, կրթական ծրագրերին հայ համայնքի ակտիվ մասնակցությունը: Հայաստան ուղարկելու նպատակով «Արի տուն» ծրագրի շրջանակներում 14-20 տարեկան երիտասարդների խմբեր կազմել և կազմակերպել նրանց այցը:

13. Ակտիվացնել մշակութային կենտրոնների (տների) գործունեությունը և ձեռնարկել միջոցներ՝ նորերի ստեղծման ուղղությամբ: Այդ կենտրոններում համայնքի երեխաների համար ստեղծել համակարգչային դասարաններ:
14. Աջակցել համայնքի պատմության ուսումնասիրման, ամբողջականացման և տպագրելու հարցերին, համայնքի գործունեության մասին ֆիլմերի նկարահանմանը:
15. Համայնքի համար հայոց լեզվի, հայ գրականության, հայոց պատմության և հայագիտական այլ առարկաների գծով մասնագետներ պատրաստելու համար ընտրել երիտասարդներ և գործուղել Հայաստան՝ պետության միջոցներով կրթություն ստանալու համար (ՀՀ բուհերում):
16. Ստեղծել մշակութային հանձնախումբ և մշակել ու իրականացնել մշակութային ծրագրեր, այդ թվում՝ ՀՀ պետական տոների (հավելված թիվ 1), տարբեր հոբելյանների, կարևոր իրադարձությունների, տոնակատարությունների առընչությամբ:
17. Աջակցել համայնքային երգչախմբերի, փոքրերի և մեծերի պարի խմբերի ստեղծմանը:
18. Ստեղծել նկարչական ակումբ, թատերական խմբակ, ժող. գործիքների համույթ, ասմունքի խմբակ և այլն:
19. Կարևոր իրադարձությունների առթիվ կազմակերպել մշակութային միջոցառումներ, հուշ-երեկոներ (մեծարման, մերձեցման, հիշատակի և այլ բնույթի):
20. Կազմակերպել հայկական մշակույթին վերաբերող դասընթացներ, դասախոսություններ, զրույցներ, քննարկումներ՝ հատկապես երիտասարդների համար:

21. Ավանդական դարձնել տեղերում հայկական մշակութային օրերի՝ Հայաստանի օրերը համայնքում կամ համայնքային օրերը Հայաստանում կազմակերպումը:
22. Կազմակերպել ժողովրդական և աշուղական երաժշտության մրցույթներ:
23. Հաշվառել տարածքում եղած հայկական պատմամշակութային ժառանգության օբյեկտները՝ հուշարձանները, եկեղեցիները, խաչքարերը, հնագույն և հազվագուտ գրքերը, ձեռագրերը, հայկական այլ բնույթի ունեցվածքը, ճշտել դրանց իրավական կարգավիճակը:
24. Տարբեր միջոցառումներում մեծարել համայնքի անվանի արվեստագետներին, գիտնականներին, գրողներին, գործարարներին, քաղաքական գործիչներին, բազմազավակ ընտանիքներին:
25. Սերտորեն համագործակցել Հայ Առաքելական Եկեղեցու հետ, աջակցել ծխական խորհուրդների աշխատանքներին, կրոնական տոնակատարությունների անցկացմանը:
26. Մասնակցել համայնքում հայկական եկեղեցիների կառուցման կամ վերակառուցման աշխատանքներին:
27. Աջակցել համայնքում թեմական խորհրդի ստեղծմանը՝ նպաստելով հոգևոր կրթությանը և դաստիարակությանը:
28. Օժանդակել եկեղեցում պասկադրությունների, մկրտությունների, այլ ծիսակատարությունների անցկացմանը:

2. ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

«Սփյուռքը մոտեցնել Հայրենիքին»

1. Նպաստել համայնքային լրատվամիջոցների (ռադիո, հեռուստատեսային հաղորդումներ, էլեկտրոնային կայքեր, ամսագրեր, թերթեր և այլն) գործունեությանը և նորերի ստեղծմանը:
2. Մասնակցել համահայկական միասնական տեղեկատվական դաշտի ձևավորմանը՝ համահայկական կարևորության հարցերի շուրջ միասնական քաղաքականության տարածման, Հայաս-

տանի քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային ոլորտների լուսաբանման և միասնական ճակատով հակաքաղաքական իրականացման նպատակով:

3. Համագործակցել Հայաստանի, ԼՂՀ-ի և Սփյուռքի լրատվամիջոցների հետ, նրանց ուղարկել տեղեկատվական նյութեր:
4. Ակտիվացնել Հայաստանում և Սփյուռքում ստեղծված տեղեկատվության փոխանակմանը, տեսաժողովներին, համահայկական համաժողովներին համայնքի լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությունը:
5. Համայնքի գործունեության, կազմակերպվող միջոցառումների մասին պարբերաբար տեղեկատվություն տրամադրել ՀՀ սփյուռքի նախարարության “Հայերն այսօր” էլեկտրոնային թերթին:

3. ՍՈՑԻԱԼ- ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ

1. Ստեղծել մասնագիտական խմբեր, միություններ, ընկերակցություններ, օժանդակել գործող կազմակերպությունների գործունեությանը:
2. Նպաստել համայնքում առկա մասնագիտական ներուժի հայտնաբերմանը, մասնագետների և գիտնականների ներգավմանը համապատասխան միություններում, կազմակերպություններում և համահայկական ցանցային կառույցներում, օժանդակել Հայաստանում գործող նմանատիպ կառույցների հետ կապերի հաստատմանը:
3. Ապահովել ՀՀ տնտեսական ծրագրերին հայ գործարարների մասնակցությունը:
4. Համայնքի ծրագրերի իրականացմանը ակտիվորեն ներգրավել հայ գործարարներին, բարերարներին:
5. Նպաստել «Դեպի Հայաստանի Հանրապետություն» զբոսաշրջության ընդլայնմանը, ուխտագնացության կազմակերպմանը դեպի Հայաստան՝ «3 տարին մեկ հանգիստդ անցկացրու Հայաստանում» կարգախոսի ներքո:

4. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈԼՈՐՏ

1. Ստեղծել հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ միջոցառումների կազմակերպման տարածաշրջանային հանձնաժողովներ, համակողմանի օժանդակել դրանց աշխատանքներին:
2. Աշխատանքներ տանել Ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացին ավելի մեծ թափ հաղորդելու համար:
3. Նպաստել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիմնախնդրի վերաբերյալ համակողմանի տեղեկատվության տարածմանը, բոլոր հնարավոր միջոցներով օգնություն ցուցաբերել Արցախում բնակվող մեր հայրենակիցներին:
4. Համայնքներում զարգացնել հայկական լրբբիստական գործունեությունը, հատկապես երիտասարդների շրջանում:
5. Նպաստել հայերի ինտեգրմանը և առաջընթացին՝ բնակության երկրի քաղաքական, տնտեսական, հոգևոր և հանրային կյանքի բոլոր ոլորտներում: Օգնել երիտասարդների ներգրավմանը տեղի քաղաքական կյանքում:
6. Բնակության երկրում հայության վարկանիշի բարձրացման նպատակով հաճախակի կազմակերպել մշակութային, հոբբելյանական և այլ միջոցառումներ՝ տեղի հիմնական բնակչության և այլազգի համայնքային կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ:
7. Օժանդակել բնակության երկրում հայկական հասարակական կազմակերպությունների գործունեության աշխուժացմանը, ինչպես նաև, Հայրենիքում գործող համանման կազմակերպությունների հետ կապերի ամրապնդմանը:

5. ԻՐԱՎԱԿԱՆ-ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՈԼՈՐՏ

1. Համայնքի ներկայացուցիչներին ցուցաբերել իրավաբանական խորհրդատվություն և օգնություն բնակության երկրի օրենսդրության, նրանց իրավունքների ու պարտականությունների իմացության մակարդակի բարձրացման ուղղությամբ:

2. Հայրենիք վերադառնալ ցանկացողներին տրամադրել Հայաստանի Հանրապետության օրենսդրության վերաբերյալ տեղեկություններ:
3. Կազմակերպել բնակության երկրի, Հայաստանի քաղաքական, տնտեսական, մշակութային և գիտական կյանքում մեծ ներդրում ունեցող հեղինակավոր անհատների, բարերարների մեծարման երեկոներ, հանդիսություններ:
4. Ակտիվորեն մասնակցել տեղական իշխանությունների կողմից կազմակերպվող միջոցառումներին, ձեռնարկումներին, բարեկամական հարաբերություններ հաստատել տարածքում բնակվող այլ ազգային փոքրամասնությունների հետ:
5. Մշակել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցության հատուկ ծրագրեր:
6. Քարոզչական աշխատանքներ տանել ՀՀ երկքաղաքացի դառնալու համար և օժանդակել այդ նպատակով փաստաթղթերի ձևակերպմանը:

6. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

«Յուրաքանչյուր հայ երիտասարդ պետք է փիրապետի մայրենիին»

1. Մշակել հատուկ ծրագրեր երիտասարդներին հայրենասիրական, հայկական ոգով դաստիարակելու համար, ստեղծել ակումբներ, հանդիպումների սրահներ, մարզական կենտրոններ:
2. Նպաստել երիտասարդության շրջանում ազգային մշակույթի և ավանդույթների պահպանմանը, զարգացմանը և տարածմանը:
3. Ստեղծել պարային, մարզական և երաժշտական խմբակներ:
4. Երիտասարդներին հասանելի դարձնել հայ ռազմարվեստի պատմությունը, Արցախյան ազատամարտի հերոսների կյանքն ու գործունեությունը:

5. Օժանդակել երիտասարդությանը՝ կապեր հաստատելու այլ համայնքների երիտասարդական կազմակերպությունների, կառույցների հետ:
6. Երիտասարդների ուժերով և անմիջական մասնակցությամբ պարբերաբար կազմակերպել երիտասարդական հավաքներ՝ նվիրված որևէ նշանակալի իրադարձության տվյալ երկրում կամ հայրենիքում:
7. Ստեղծել մարզական խմբեր (ֆուտբոլի, բասկետբոլի, շախմատի և այլն) ու աջակցել ազգային խաղերի կազմակերպմանը:
8. Ապահովել Հայաստանում կազմակերպվող համահայկական խաղերին և երիտասարդական հավաքներին, դպրոցներին, դասընթացներին համայնքի ակտիվիստների մասնակցությունը:
9. Կապեր հաստատել ՀՀ երիտասարդական հասարակական կազմակերպությունների, ուսանողական խորհուրդների հետ:

7. ԿԱՆԱՅՔ ԵՎ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԸ

«Առնվազն 3 որդով սեղան նստենք»

1. Ստեղծել կանանց հիմնախնդիրներով զբաղվող հանձնախումբ:
2. Անցկացնել հայ կանանց «Մայրության և գեղեցկության» օրվան նվիրված միջոցառումներ՝ մարտի 8-ին և ապրիլի 7-ին:
3. Ստեղծել «Սոսե մայրիկ»-ի անվան կանանց հայրենասիրական ակումբ:
4. Ստեղծել հայկական ազգային տարազների պատրաստման, կար ու ձևի խմբակներ:
5. Կազմակերպել հայկական ազգային ձեռագործության դասընթացներ:
6. Կազմակերպել հայկական խոհանոցի վերաբերյալ դասընթացներ, «հայկական խոհանոց» ցուցահանդես-վաճառքներ, տոնախմբություններ:

7. Համագործակցություն հաստատել կանանց տեղական և միջազգային կազմակերպությունների հետ:
8. Օժանդակել ծնողագուրկ երեխաների սոցիալական խնդիրների լուծմանը:
9. Միանալ «հայերն առանց ծխախոտի» շարժմանը:
10. Խրախուսել բազմազավակությունը և տարածել «3 որդով սեղան նստենք» կարգախոսը:
11. Բարձրացնել հայ ընտանիքի դերն և նշանակությունը, նպաստել հայ ընտանիքների կազմավորմանը:
12. Քարոզել հայկական ընտանեկան ավանդույթները, սովորույթները, խրախուսել դրանց ամրապնդումը՝ գրքերի, ցուցահանդեսների, դասընթացների, ֆիլմերի օգնությամբ:
13. Համակողմանի աշխատանքներ տանել խառնամուսնությունների արդյունքում ծնված երեխաներին հայ համայնքի, հայ եկեղեցու, հայ ինքնության հետ կապելու գործում:
14. Պահպանել ընտանիքում հայկական բարքերը և ավանդույթները:
15. Խթանել այլալեզու, այլակրոն հայերի շրջանում հայկական ազգային ինքնության գիտակցության զարթոնքը, նրանց շրջանում իրականացնել «հայադարձության» ծրագրեր:

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ - ՀԱՄԱՅՆՔ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մշտական կապ պահպանել ՀՀ Սփյուռքի նախարարության հետ՝

- մասնակցել բոլոր ծրագրերին (հավելված N 2)
- աջակցել ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից իրականացվող ծրագրերի իրականացմանը և համապատասխան միջոցառումների կազմակերպմանը համայնքում,

ՀՀ սփյուռքի նախարարության մասին տեղեկություններ կարող եք ստանալ ՀՀ սփյուռքի նախարարության պաշտոնական կայքէջից՝ www.mindiaspora.am և ՀՀ սփյուռքի նախարարության «Հայերն այ-սոր» էլեկտրոնային թերթից՝ www.hayernaysor.am:

ՕԳՏԱԿԱՐ ԿԱՅՔԷՋԵՐ

- ◆ ՀՀ Նախագահ՝ www.president.am
- ◆ ՀՀ Կառավարություն՝ www.gov.am
- ◆ ՀՀ Ազգային ժողով՝ www.parliament.am
- ◆ ՀՀ Սահմանադրական Դատարան՝ www.concourt.am

ՀՀ նախարարություններ

- ◆ ՀՀ աշխարանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն՝ www.mss.am
- ◆ ՀՀ առողջապահության նախարարություն՝ www.moh.am
- ◆ ՀՀ արդարադատության նախարարություն՝ www.justice.am
- ◆ ՀՀ արտաքին գործերի նախարարություն՝ www.armeniaforeignministry.com
- ◆ ՀՀ բնապահպանության նախարարություն՝ www.mnp.am
- ◆ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն՝ www.minagro.am
- ◆ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ www.mineconomy.am

- ◆ ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարություն՝ **www.minenergy.am**
- ◆ ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն՝ **www.edu.am**
- ◆ ՀՀ մշակույթի նախարարություն՝ **www.mincult.am**
- ◆ ՀՀ պաշտպանության նախարարություն՝ **www.mil.am**
- ◆ ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարություն՝ **www.msy.am**
- ◆ ՀՀ սփյուռքի նախարարություն՝ **www.mindiaspora.am**
- ◆ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն՝ **www.mta.gov.am**
- ◆ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն՝ **www.mtc.am**
- ◆ ՀՀ քաղաքաշինության նախարարություն՝ **www.mud.am**
- ◆ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ **www.minfin.am**

Պետական կառավարման այլ մարմիններ

- ◆ Հայաստանի կենտրոնական բանկ՝ **www.cba.am**
- ◆ Ազգային անվտանգության ծառայություն՝ **www.sns.am**
- ◆ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ **www.cadastre.am**
- ◆ Հայաստանի փրկարար ծառայություն՝ **www.ema.am**
- ◆ Պետական եկամուտների կոմիտե՝ **www.taxservice.am**
- ◆ ՀՀ Տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալություն՝ **www.dmr.am**
- ◆ Պետական գույքի կառավարման վարչություն՝ **www.privatization.am**
- ◆ Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն՝ **www.aviation.am**
- ◆ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա՝ **www.sci.am**
- ◆ ՀՀ Գլխավոր դատախազություն՝ **www.genproc.am**
- ◆ ՀՀ Ոստիկանություն՝ **www.police.am**

Լրատվական գործակալություններ

- ◆ Արմենպրես՝ **www.armenpress.am**
- ◆ Նոյյան Տապան՝ **www.nt.am**
- ◆ Արմինֆո՝ **www.arminfo.info**

- ◆ Մեդիամաքս՝ **www.mediamax.am**
- ◆ ԱՌԿԱ՝ **www.arka.am**
- ◆ **www.panorama.am**
- ◆ **www.slaq.am**
- ◆ **www.tert.am**
- ◆ **www.lin.am**
- ◆ **www.news.am**
- ◆ **www.zham.am**
- ◆ **www.panarmenian.net**
- ◆ **www.aysor.am**

Այլ կայքէջեր

- ◆ ԼՂՀ Նախագահ՝ **www.president.nkr.am**
- ◆ ԼՂՀ արտաքին գործերի նախարարություն՝ **www.nkr.am**
- ◆ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի՝ **www.matenadaran.am**
- ◆ Հայոց ցեղասպանությանը և հայկական հարցի ուսումնասիրությանը նվիրված էջ՝ **www.armenian-genocide.org**
- ◆ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիրակրթական հիմնադրամ՝ **www.noravank.am**
- ◆ «ՀԱՅԱՍՏԱՆ» համահայկական հիմնադրամ՝ **www.himnadram.org**
- ◆ Ձարգացման հայկական գործակալություն՝ **www.ada.am**
- ◆ Ղարաբաղ և փարածաշրջան՝ **www.karabagh.am**
- ◆ Հայաստանի մասին՝ **www.armeniainfo.am**
- ◆ Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհուրդ՝ **www.itdsc.am**
- ◆ Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն՝ **www.smednc.am**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐ

1. Ամանոր և Ծննդյան տոներ՝ դեկտեմբերի 31-ից հունվարի 2-ը ներառյալ (Ամանոր), հունվարի 3-ին, 4-ին և 5-ին (նախաձննդյան տոներ) և հունվարի 6-ին (Սուրբ Ծնունդ և Հայտնություն): Սուրբ Ծննդյան և Հայտնության տոնին հաջորդող՝ Մեռելոց հիշատակի օր՝ հունվարի 7-ին:

2. Հունվարի 28 - Բանակի օր

3. Փետրվարի 21 - Մայրենի լեզվի օր

4. Փետրվարի 28 - Ադրբեջանական ԽՍՀ-ում կազմակերպված ջարդերի զոհերի հիշատակի և բռնազաղթված հայ բնակչության իրավունքների պաշտպանության օր:

5. Մարտի 8-ին - Կանանց տոն

6. Ապրիլի 7 - Մայրության և գեղեցկության տոն:

7. Ապրիլի 24 - Ցեղասպանության զոհերի հիշատակի օր

8. Մայիսի 1 - Աշխատանքի օր

9. Մայիսի 8-ին - Երկրապահի օր

10. Մայիսի 9 - Հաղթանակի և խաղաղության տոն

11. Մայիսի 28 - Հանրապետության տոն

12. Հունիսի 1-ին - Երեխաների իրավունքների պաշտպանության օր

13. Հունիսի 14 - Բռնադատվածների հիշատակի օր

14. Հուլիսի 5 - Սահմանադրության օր

15. Սեպտեմբերի 1 - Գիտելիքի և դպրության օր

16. Մեպտեմբերի 21 - Անկախության տոն

17. Հոկտեմբերի 5 - Ուսուցչի օր

18. Հոկտեմբերի երկրորդ շաբաթ օրը - Թարգմանչաց տոն

19. Դեկտեմբերի 7 - Երկրաշարժի զոհերի հիշատակի օր

20. Սուրբ Զատիկից 8 շաբաթ առաջ՝ հինգշաբթի օրը - Սուրբ Վարդանանց տոն՝ բարի գործի և ազգային տուրքի օր

21. Սուրբ Զատիկից 64 օր հետո կիրակի օրը - Սուրբ Էջմիածնի տոն

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԸՆԴԱՌԱՋ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

**ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ
ՏԱՐԵԼԻՑԻՆ ԸՆԴԱՌԱՋ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ**

N

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ժամկետը

2013-2015 թթ

ԱՐԽԻՎԱՅԻՆ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ.

1. Հավաքագրել Ցեղասպանությունից փրկվածների և նրանց ժառանգների հուշերը
2. Հավաքագրել եղած վավերագրերը
3. Հավաքագրել արխիվային նյութերը
4. Հավաքագրել Ցեղասպանված ընտանիքների պատմությունները՝ հրատարակման նպատակով
5. Կազմակերպել Ցեղասպանության թեմայով հետազոտություններ, թարգմանել և տարածել պատմական, հրավական և արխիվային նյութեր
6. Հրատարակել Ցեղասպանությունից փրկվածների գաղթին, հայ համայնքի ստեղծմանն ու գոյատևման պատմությանը նվիրված գրքեր և կազմակերպել ցուցահանդեսներ
7. Թողարկել տարբեր լեզուներով էլեկտրոնային գրքեր՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաները

8. Համացանցում ամբողջ 2015թ. ընթացքում անհատական նախաձեռնությամբ տեղադրել Ցեղասպանությանը վերաբերող հոդվածներ, նյութեր, նկարներ, մեծ տեղ տալով Սևրի պայմանագրին ու Վիլսոնյան սահմաններին: Սփյուռքում քաջալերել Թուրքիայի փոքրամասնությունների իրավունքները:
9. Արևմտյան երկրների հանրաճանաչ թերթերում գնել շաբաթական սյունակներ, և այնտեղ տեղադրել Ցեղասպանությանը վերաբերող հոդվածներ՝ օտար ստորագրություններով
10. Հավաքել ու հրատարակել Թուրքիայում առաջադեմ թուրք, քուրդ, ավելի և համշեն գրողների կողմից գրված և ջարդն ու կոտորածը քննադատող հոդվածներն ու հրատարակել օտար և թուրքերեն լեզուներով: Այս հարցում կարող են օգտակար լինել պոլսահայ մտավորականները:
11. ՀՀ Սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ և Հայաստանի գրողների միության գործակցությամբ, պատրաստել Նահատակ գրողների գործերից հատընտիր՝ նվիրված՝ Ցեղասպանության 100-ամյակին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Ակտիվացնել Ցեղասպանությանը նվիրված համայնքային աշխատանքները
2. Միավորել համայնքային ներուժը
3. Միավորել լոբբիստական խմբերի աշխատանքները
4. Հայկական դպրոցներում կազմակերպել Ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված «Հուշ դասեր»
5. Համախմբել երիտասարդությանը
6. Եվրոպայի և ԱՄՆ-ի հայ երիտասարդությանը ներգրավել տեղական քաղաքական կյանքին և շարժումներին: Այս պարագայում առաջ տանել հայկական ազգանվան «ՅԱՆ»-ը չունեցող ազգայիններին՝ հասկանալի պատճառներով:
7. Համայնքի անդամների համար կազմակերպել Ցեղասպանության մասնագետների դասախոսություններ
8. Կազմակերպել ուխտագնացների և զբոսաշրջիկների ուղևորություններ դեպի Ցեղասպանությունը խորհրդանշող վայրեր

ԼՈՐՔԻՍՏԱԿԱՆ ԵՎ ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Նախքան 2015թ. ունենալ պահանջատիրության հստակ ցուցակ՝ այն նաև գալիք սերունդներին փոխանցելու համար
2. Ապահովել պարբերական տեղեկատվություն Ցեղասպանության թեմայով
3. Տարածել քարոզչական գրականություն
4. Պատրաստել գրքույկներ՝ օտար և թուրքերեն լեզուներով, անդրադառնալով Ցեղասպանությանը, նշելով ջարդի ու կոտորածի ենթարկված հայկական քաղաքների ու գյուղերի հայ բնակչության թվաքանակը, միևնույն ժամանակ մի քանի լեզուներով պատրաստել հայկական գրավված և ավերված 2500 եկեղեցիների անուններն ու վայրերը բնորոշող ալբոմներ, նույնիսկ՝ նկարներով (ինարավորության դեպքում) և դրանք առաքել ՄԱԿ-ի ներկայացուցիչներին, բոլոր դեսպանատներին, պատմաբաններին, քաղաքագետներին, համալսարաններին և մամուլի օրգաններին:
5. Պատրաստել մեծ թվով թուրքագետներ, թուրքագետ հայ լրագրողներ և 2015 թվականի ընթացքում թուրքական թերթերը ողողել հայասնպաստ հոդվածներով, դատապարտելով թուրքական բոլոր ժամանակների ջարդերն ու կոտորածները:
6. Տարածել տեղեկատվություն Ցեղասպանության, նրա շուրջ զարգացումների և ձեռքբերումների վերաբերյալ
7. Ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ ակտիվացնել լրբբիստական աշխատանքները
8. Ավելացնել հայկական լրբբիստական խմբերի թիվն աշխարհում
9. Ցեղասպանության միջազգային ճանաչմանը նպաստելու համար կազմակերպել ստորագրահավաքներ
10. Խորհրդարաններում աշխատանքներ տանել ինչպես առանձին պատգամավորների, այնպես էլ խմբերի, խմբակցությունների, հանձնաժողովների հետ
11. 2015թ. Հայաստանի և հայկական հեռուստաընկերությունների բոլոր ալիքներով սփռել թուրքերեն լեզվով մասնավոր հայտագրեր, լայն տեղ տրամադրելով Ցեղասպանության ակնատեսների վկայություններին և զարգացնել հաղորդակցությունը բոլոր հայկական տեղեկատվական միջոցների միջև

12. Կազմակերպել քաղաքական գործիչների և գիտնականների ելույթներ Յեղասպանության թեմայով հեռուստատեսությամբ
13. Պատրաստել Յեղասպանությունը բնորոշող տեսակավոր դրոշմաթղթեր՝ օտար լեզուներով և թուրքերենով, 2015թ. հունվարից դրանք դնել շրջանառության մեջ՝ տրամադրելով Սփյուռքին, ամբողջ աշխարհում տարածելու համար:
14. Աշխատանքներ իրականացնել տեղի թուրքական համայնքի հետ
15. Աշխատանքներ իրականացնել այն թուրք մտավորականների հետ, ովքեր դատապարտել և դատապարտում են Թուրքիայի խեղաթյուրումները Հայոց ցեղասպանության հարցում, մեղադրվում են «Սփյուռքի հայկական լրբբիստական կազմակերպությունների» աջակցությունը վայելելու մեջ:
16. Կապեր հաստատել Յեղասպանության հետազոտությամբ զբաղվող գիտական և մշակութային գործիչների, լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության կառույցների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ
17. Կազմակերպել ցուցահանդեսներ Յեղասպանության թեմայով
18. Նկարահանել վավերագրական և գեղարվեստական ֆիլմեր Յեղասպանության թեմայով
19. Կազմակերպել կյոր-սեղաններ, քննարկումներ և գիտաժողովներ Յեղասպանության թեմայով
20. 2015թ. ընթացքում բոլորտել թուրքական ապրանքները, արգելել նրանց մուտքը Հայաստան և չքաջալերել դեպի Թուրքիա զբոսաշրջությունը:
21. Գումարել հայ մեծահարուստների համաժողով Հայաստանում, նրանց ներդրումներով փոքրիկ ավան կառուցելու համար: Ավանն անվանակոչել ՎԵՐԱԾՆՈՒՆԴ և նրա շուրջը տնկել 1.5 միլիոն ծառ, որպես 100-ամյակի ոգեկոչման հուշարձան, այն ներգաղթողներին տրամադրելու համար:
22. Բոլոր ԶԼՄ ներկայացուցիչներից բաղկացած շտաբի ստեղծում՝ նախատեսվող բոլոր միջոցառումների պլանավորման, կազմակերպման և լուսաբանման նպատակով:

«ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ»

ՀՀ սփյուռքի նախարարության մի շարք ավանդական ծրագրեր

1. Հայաստան-Սփյուռք գործակցության թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստում և հեռարձակում, ձեռքբերում և բազմացում
2. Սփյուռքի կրթօջախներին գրականության առաքում
3. «Հայկական Սփյուռք» տարեգրքի հրատարակում
4. Հայաստան սփյուռքի երիտասարդության պարբերական այցելությունների «Արի տուն» ծրագիր
5. ՀՀ-ում համահայկական, այդ թվում մասնագիտական, խորհրդատուական անցկացում
6. «Սփյուռք» ամսոային դպրոց
7. «Մեր մեծերը» խորագրով մշակութային միջոցառում
8. «Իմ Հայաստան» համահայկական մշակութային փառատոն
9. Ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումներ
10. Համահայկական մրցանակաբաշխություն
11. Սփյուռքի հայ համայնքների ղեկավարների տարածաշրջանային հավաքներ (Հայաստանում կամ սփյուռքում)
12. Հայ համայնքների կրթամշակութային զարգացման աջակցություն տարածաշրջանային ծրագրեր
13. Սփյուռքահայերի ինտեգրման ծրագիր
14. Հայկական սփյուռքի գիտական, կրթական, տնտեսական, մշակութային եվ այլ ոլորտներում առկա ներուժի հաշվառման մեխանիզմների ու տվյալների միասնական համակարգի ստեղծում